ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ըստ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐԻ

(„Состояніе скотоводства на Кавказѣ“ Рогатый скотъ.—Изъ II тома „Матеріаловъ для устр. казенн. пастбищъ и для изуч. скотоводства на Кавказѣ“).

Ց. ՍԱՂԱԹԵԼԵԱՆԻ

Պր. Ալ. Քալանթարի աշխատութիւնը պաշտօնական հետազօտութիւն է և գրուած է ի հարկէ ռուսերէն լեզուով։ Պաշտօնական հետազօտութիւնները առհասարակ, ծառայելով յատնի վարչական նպատակների, լինում են մեծ մասամբ միակողմանի և ոչ միշտ համապատասխան անձից կատարուած։ Պաշտօնական հետազօտողը սովորապէս իւր առանձին ուշադրութիւնը լարում է ուսումնասիրելի առարկայի այն կողմի վերայ, որը իսկական դրդիչն է այդ հետազօտութեան և որի վերաբերմամբ յատնի վարչական մտադրութիւններ կան։ Բայց լինում են դէպքեր, երբ պաշտօնական հետազօտութիւնները կրում են գրական և գիտնական հետազօտութիւնների բոլոր արժանաւորութիւնները, դոցա կատարողների յատկութիւնների շնորհիւ։ Այդ տեսակ մի երևոյթ է ներկայացնում նաև պ. Քալանթարի հետազօտութիւնը, որի նիւթը կազմում է մի առաջնակարգ տնտեսական նշանակութիւն ունեցող առարկայ—անասնապահութիւնը ամբողջ Կովկասում։ Մի այնպիսի երկիր, որպիսին մերն է, որտեղ տնտեսական կեանքը դլխաւորապէս կայանում է գիւղական արդիւնաբերութեան մէջ, շատ հեշտ է հասկանալ թէ ինչ դեր պիտի խաղայ այդ կեանքում անասնապահութիւնը։ Վերջինս, բացի իւր անմիջական արդիւնաբերական դերից, որը երբեմն ժողովրդի դոյութեան միակ աղբիւրն է կազմում մի այնպիսի գիւղատնտեսական երկրում, որպիսին մերն է, պայմանաւորում է արդիւնաբերութեան համարեայ բոլոր միւս ճիւղերի գոյութիւնը։ Անասնապահութեան այդ մեծ

տնտեսական նշանակությունը կազմում է հետազոտության գլխավոր հիմքը։ Այդ դժվար և բազմակողմանի խնդրի մեջ հետազոտողը ցույց է տալիս հիմնավոր մասնագիտական պատրաստություն, միացած իմաստասիրական ընդունակության և պարզ ու նկարչական ոճի հետ։

Պր. Քալանթարի աշխատությունը բաղկացած է երկու մասից. իսկական շարադրությունից և 2) նիութերից, որոնց վերաբերյալ հիմնված է առաջին մասը։ Այդ աշխատության արժեքը հասկանալու համար, բավական է իմանալ, որ նիութերը կազմում են հեղինակի անմիջական դիտողությունները, որ նա կատարել է շրջելով ամբողջ երկիրը, ուսումնասիրելով ամեն մի անկիւն, ուր գտել է մի որ և իցէ տեղային առանձնայատկություն։ Կովկասի կլիմայի և բնության բազմատեսակությունը բնականաբար պիտի արտայայտուէր և նրանում գտնուող կենդանիների ցեղերի և տեսակների վերաբերյալ։ Այդ, այսպէս ասած, բնությունից ծագած բարդություններին՝ Կովկասում միանում է անասնապահության վերաբերմամբ՝ ժողովուրդների կուլտուրական սովորությունների և պահանջների բազմատեսակությունը։ Չը նայելով խնդրի այսպիսի դժվարություններին, հեղինակը զարմանալի յաջողությամբ լուծել է նրան։ Նրա նկարագրությունը անասնապահության դրության, բազմակողմանիության և սիստեմատիկականության պատճառով՝ կարող է բաւարարություն տալ իւրաքանչիւր մէկին՝ ինչ տեսակէտից որ հետաքրքրուէր այդ առարկայով։ Ահա ինչումն է նորա անփոխարինելի առաւելությունը։

Առաջին մասը բաղկացած է յառաջաբանից և 5 գլուխներից։ Յառաջաբանի մէջ հեղինակը խօսում է այն առանձին պայմանների մասին, որոնք ի միջի այլոց ազդում են Կովկասի անասնապահության վերայ, որոնք կայանում են բնակիչների սովորությունների խտրության մէջ. օրինակ մինչդեռ ժողովրդի մի մասի կենդանիները ձմեռը կերակրում են տաք բնակարաններում, ռուս աղանդաւորներինը՝ ապրում է ուղղակի ձիւնի վերայ, խաչնարածներինը մեծ մասամբ արածում է ամբողջ ձմեռ կիսացուրտ տեղերում։ Հիւսիսային Կովկասում շատ տեղերում հորդերը ծծում են միայն մի քանի շաբաթ, մինչդեռ միւս մասերում շարունակ՝ քանի կովը կաթ է տալիս։ Նոգայները և ռուս աղանդաւորները կաթի արդիւնաբերության ժամանակ երբէք չեն տաքացնում նրան, իսկ միւսները բոլորովին հակառակն են անում։ Բնակչության մի քանի մասերի համար անասնապահությունը կազմում է միակ ապրուստի միջոցը, իսկ միւսների համար օժանդակիչ։ Ապա բերում է մի քանի նահանգների անասունների թիւը, ըստ Տրեսկովսկու և Արքունի կալածների նախարարության հետազոտությունների։ Ըստ Տրեսկովսկու՝ Անդրկովկասի և Հիւսիսային Կովկասի նահանգներում անասունների միջին թիւը 1871—1881 ժամանակամիջոցում եղած է.

	Ռեֆ. անասուն.	ոչխար.	յե.
Բաքուայ նահանգում	600.000	1.000.000	300.000
Թիֆլիսի »	500.000	1.900.000	80.000
Գանձակի »	400.000	1.500.000	100.000
Երևանի »	250.000	500.000	50.000
Քութայիսի »	150.000	124.000	40.000
Կուբանի »	1.000.000	1.713.000	170.000
Ստաւրապոլի »	616.000	1.780.000	990.000
Տերսկու »	200.000	16.400	40.000
Ընդամենը . .	3.716.000	8.384.300	1.039.000

Բացի այդ, Գանձակի նահանգում կան 30.000 փափկամազ ոչխար, Թիֆլիսի 9.000, Քութայիսի 1.500, Կուբանի 587.000 փափկամազ ոչխար և 154.000 այծ, Ստաւրոպոլի 300.000 ոչխար փափկամազ և 73.000 այծ, Տերսկի նահանգում—100.000 այծ։ Արքունի նախարարութեան թուերը վերաբերում են միայն արքունի գիւղացիներին։ Այս տեղից մենք կը բերենք միայն այն թէ միջին արքունի գիւղացու տան վերայ որքան անասուն է գալիս. Թիֆլիսի նահանգում ամեն տեսակի անասուն միջին տանը ընկնում է 32 գլուխ, Բաքուի 20, Երևանի 22, Գանձակի 17, Քութայիսի 5. կոտորակները թողնում ենք։ Այս թուերից պարզ երևում է, որ անասնապահութիւնը մեր երկրի տնտեսական կեանքում նշանաւոր տեղ է բռնում, բայց նա արդեօք բարւոքում է մեր երկրի աղգաբնակութեան նիւթական պայմանները այն չափով, որ չափով կարող է, ահա ինդիրը։ Թուերին նայելով պէտք է այդ բոլորը սպասել, բայց իսկապէս լաւ լայնի է, որ մեր աղգաբնակութեան տնտեսական դրութիւնը բոլորովին նախանձելի չէ։ Այդ քանակութեամբ անասնապահութիւն՝ մի եւրոպական երկրում միայն վերցրած՝ դրաւական է ժողովրդի բարեկեցութեան։ Բայց ինչու մեզանում աղգաբնակութիւնը ունենալով միևնոյն պայմանը, ունենալով նաև բաւականաչափ մշակութեան հող, մեծ մասամբ ամեալաւ կրիմայական պայմաններում, որտեղ բուսնում են թանկագին բերքեր, ողորմելի դրութեան մէջ է։ Մի եւրոպացի գիւղական ընտանիք ունենալով 32, 20, 22 գլուխ անասուն՝ միայն դորանով կարող է ոչ թէ միայն բաւականանալ, այլ բարեկեցիկ կեանք ունենալ, բայց մեր գիւղացին այդքան անասունի հետ ունենալով հող, սեպհական տուն՝ աղքատ է, ապրում է ոչ թէ տան մէջ, այլ որջի, ծածկած է ցնցոտիներով, գլխաւոր սնունդ ունենալով մեծ մասամբ միայն ցամաք հացը. հողագործական աշխատանքից աղատ ժամանակը, թափառում է քաղաքները օրական 20 կամ 30 կոպէկ օրավարձի համար և կրկին թաղած մնում անվերջ պարտքերի մէջ։ Հասկանալի է թէ որտեղ պիտի փնտռել այդ վնասեցուցիչ դրութեան պատճառը։ Ցաւք այդ երկրին եւրոպական գիւղատնտեսական ար-

գիւնաբերութեան տեխնիկան և մթերքների արտահանութեան պայմանները, մենք կը տեսնենք, որ միևնոյն գիւղացին հնար կ'ունենայ թէ մարգավարի ապրուստ ունենալ և թէ մտաւորապէս յառաջ ընթանալ։ Ահա մի խնդիր որ ծագում է ժողովրդի բարեկեցութեան համար մտածողի առաջ, մի պարտք—նրանց վերայ, որոնք կարող են տալ այդ ժողովրդին այն, ինչ պակասում է նրան բարեբաստիկ կեանք ունենալու համար։

Առաջին գլխում հեղինակը որոշում է Կովկասում տարածուած տաւարի գլխաւոր տիպերը։ Նա գտնում է տաւարի երկու ցեղ, իւրաքանչիւրը մի քանի ճիւղերով, 1) Մեծ Կովկասեան և 2) Փոքր Կովկասեան։ Առաջին ցեղը ապրում է Մեծ Կովկասի բարձրաւանդակներում և հովիտներում, իսկ երկրորդ ցեղը Փոքր Կովկասի լեռնաշղթաների և հայկական լեռնագաշտի վերայ։ Առաջին մեծկովկասեան ցեղը փոքրահասակ է, քարշը մորթելուց յետոյ 3—6 փութ է, ազեղ է, սակաւակաթ. գոյնը գլխաւորապէս սև։ Այդ ցեղը բաժանւում է հեաւեալ գլխաւոր ճիւղերի՝ Դաղստանեան, Վիրական, Կարաչալեան, Կումիկեան, Կուբինեան, Շիրվանեան և այլն։ Փոքր Կովկասեանը համեմատաբար աւելի խոշոր է. մորթելուց յետոյ քաշում 8—12 փութ, գեղեցկակազմ է, կաթնատու, լայնալանջ և գլխաւորապէս կարմիր գոյնով, Այդ ցեղի ամենաազնիւ տեսակը ներկայացնում է զարաբաղաղազախեանը։ Բացի վերջինիցս նշանաւոր են, Դարալագեազեան (Վայոց ձոր) Շորագնալեան Փամբակեան (Շիրակ) և Քրդական և այլն։

Հետազօտութիւնից երևում է, որ Կովկասում տաւարի աղնիւ ցեղերը ապրում են հայկական մասում։ Հասկանալի է պատճառը. Հայաստանը յայտնի է իւր ճոխ աղբիւրներով լի արօտատեղիներով։ Այս յատկութիւնների պատճառով՝ նա դեռ շատ վաղ ժամանակներից գրաւում էր դէպի ինքը խաչարած բարբարոսներին, որոնք վերջ ի վերջոյ պիտի նորա տերը դառնային, կործանելով նորա ազգաբնակութեան հնադարեան կուլտուրան ու քաղաքական անկախութիւնը։ Կովկասեան երրորդ և փոքրաթիւ տաւարի ցեղը ներկայացնում է Կաս-պեան ղեռուն, կամ ինչպէս նրան իւր բնակավայրում՝ Լենկորանի դաւառում անուանում են «դիլեակ»։ Այս ցեղի առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ թիկունքի վերայ ունի մսագունդ մինչ 5 ֆունտ ծանրութեամբ, որը երբեմն հասնում է 10 ֆունտի։ Այս ցեղի կենդանու միջի քաշը մորթելուց յետոյ 7—7½ փութ. և աւելի է։ Գիլեակը ղեղեցկակազմ է, արագաշարժ, նման աւելի կիսավայրենի կենդանու, ցրտին աւելի դիմացկուն է քան թէ շոգին։ Արածում է ամրողջ ձմեռը, շատ անգամ ձիւնի տակից փնտռելով իւր կերակուրը։ Լեռներից տեղափոխւելով դաշտը, չի դիմանում և սատկում է։ Գիլեակի ցեղը տարածած է Լենկորանի գաւառի շարունակութիւն կազմող պարսկական նահանգներում, ինչպէս օրինակ Մազանդարանում։ Գիլեակը խառնւելով դաշտային ցեղի հետ, տալիս է նոր տեսակ «դ ու բ ա ր ի», որը ունի երկու

ցեղերի էլ առաւելութիւնները և բաւականաչափ տարածուած է լեռների գաւառում։

Այս տեղական ցեղերին միանում են Կովկասում՝ Չերկասեան և Նոգա լեան ցեղերը։ Առաջինը ներմուծել են Կովկաս ռուս աղանդաւորները, իսկ երկրորդը տարածում են Մեծ Կովկասում լեռնցիները։ Այս երկու ցեղերն էլ մեր տեղականներից խոշոր են, բայց դժուար են լարմարուում մեր բնական պայմաններին։

Հետազօտութեան ոչ դլխաւոր առարկան կազմում են տաւարի միւս տեսակները այն չափով, որ չափով նոքա աղդում են տաւարապահութեան վերայ։ Տաւարների թուում ի հարկէ դտնւում են և գոմեշները։ Վերջին տեսակի վերաբերմամբ այն է հետաքրքրական, որ նա դլխաւորապէս տարածուած է դաշտային և շոք մասերում, որտեղ շատ ջուր կայ։ Իսկ հաւերի մէջ տարածուած է և ցուրտ տեղերում, ինչպէս օրինակ Արագածի ստորոտներում, Նոր-Բայազեդի լեռնադաշտում և այլն։ Այս հանդամանքը հեղինակը բացատրում է նորանով, որ այդ տեղերի աղդաբնակութիւնը դաղթականութիւն է դաշտերից։ Իսկ մենք կարծում ենք, որ պատճառը պատմական է։ Գոմեշը ամեն տեղ տարածուած է հաւերի մէջ։ Երբ Հայաստանին թաթարները տիրեցին և բնակութիւն հաստատեցին նորանում, անասնադողութիւնը դարձաւ նորանց ամենասիրած առարկան։ Գողութեան համար ամենից քիչ լարմարութիւններ է ներկայացնում գոմեշը. նա ծանրաշարժ է ու լեռնային ուղիներում վազելու բոլորովին անընդունակ։ Այս տեսակ անասուն պահելը համեմատաբար աւելի ապահով էր։ Եւ իրաւաղուրկ հայ ժողովուրդը սաստիկ լարդում էր այս տեսակ անասունին։ Այդ կարելի է նկատել այժմ օրինակ Մշում, Ալաշկերտում և այլն. նոյնպէս և այժմ մեր երկրում, չը նայելով որ անասնադողութիւնը ամենատարածուած և ամենասովորական երևոյթն է, գոմեշներ ամենից քիչ են դողացւում։ Թուրքերը, որ գողութեան մէջ ցոյց են տալիս մեծ հնարագիտութիւն—արժանի աւելի լաւ արհեստի, մի քանի տեղեր, ինչպէս օրինակ Փամբակում, վերին աստիճանի արտասովոր և մի և նոյն ժամանակ դարշելի ոճրագործութիւն են հրնարել գոմեշի այդ անլարմարութիւնների չնորհիւ։ Չը կարողանալով ամբողջ գոմեշը գողանալ, մորթում են պատահած դիւղում այդ անասունին և վերցնում կաշին, 5 կամ 6 բուբլու համար գիւղացուն տալով 60 կամ 70 բուբլու ձեաս։

Պէտք է ցաւել որ հեղինակի հետազօտութեան մէջ չէ մտել ձիապահութիւնը մեղանում, չը նայելով, որ այդ կողմից մեր երկիրը նոյնպէս հետաքրքրելի է։ Ցաւանի է որ մեր ձիերը, հին ժամանակներից սկսած, երկրորդն են համարւում արաբականից յետոյ։ Անասնապահութեան այս ճիւղը, եթէ կանոնաւոր կերպով առաջ տարուի, կարող է մեծ եկամուտի աղբիւր դառնալ մեր երկրի համար։ Մեր երկրի ձին, երբ ամենաոլաստուկտն տեսակներից էր համարւում, անդլիականը բոլորովին լայտնի չէր. բայց նրանց

տեխնիկան այնքան է աղեւացրել տեղական ձիու ցեղը, որ հատը մի քանի հաղար ռուբլիներով է ծախվում, մինչդեռ մերը երկու հարիւր ռուբլու հազագիւտ դէպքումն է հանում։ Այս ճիւղի չը հետաղօտելու համար չի կարելի մեղադրել հեղինակին, որովհետեւ նրա թեման պաչտօնական է, ինքը չի ընտրել։ Նոյն պատճառով հեղինակը առանձին չի հետաղօտել անասպահութեան միւս նչանաւոր ճիւղը — ոչխարապահութիւնը։

Միւս գլուխներում հեղինակը խօսում է անասնապահութեան նպատակի, նրա սննդի միջոցների, կաթի արդիւնաբերութեան և գոմչապահութեան մասին։ Այդ չօդւածներից երեւում է, որ անասնապահութիւնը մեր երկրի բոլոր ժողովրդների համար դոյութեան պայման է, ոչ սակաւ անգամ կազմելով եկամուտների միայնակ աղբիւրը, ինչպէս օրինակ խաչնարածների մօտ։

Ժողովրդի արդիւնքը անասնապահութիւնից գլխաւորապէս կայանում է նրանում, որ բոլոր հողագործութիւնը հիմնուած է այդ ոյժի վերայ և կաթնեղէնը հացից յետոյ կազմում է նրա ամենագլխաւոր սնունդը։ Անասնավաճառութիւնը, իբրև եկամուտի աղբիւր, նոյնպէս կաթի արդիւնքների վաճառումը՝ ընդհանուր երեւոյթ չէ և յատուկ է գլխաւորապէս խաչնարածներին և առանձնապէս խոտառատ դաւառների բնակիչներին։ Կաթից գլխաւոր մթերքներ պատրաստելը՝ իւղը և պանիրը յատնի է աղդաբնակութեան բոլոր մասերին և ղգալի առանձնայատկութիւններ չի նշմարւում դրանց վերաբերմամբ։ Պանրի մի քանի տեսակները, ինչպէս օրինակ օսերինը, ղազախինը, թուշերինը խիստ յարգւած են թէ և ծախւում են եւրոպական տեսակներից 4 կամ 5 անգամ աւելի աժան։ Ի՞նչու. ի՞նչու միեւնոյն առարկան, նոյնպիսի կաթից պատրաստած, տալիս է մեր ժողովրդին 4 կամ 5 անգամ աւելի քիչ եկամուտ քան թէ եւրոպացուն։

Մեր կեանքի ամեն մի երեւոյթը դիտելիս՝ միշտ ծագում է այդ հարցը։ Շատ տխուր և վհատեցուցիչ տեսարան է ներկայացնում մեր երկրի ժողովուրդների իրական կեանքը։ Դա աղքատութեան և տգիտութեան տեսարան է, մինչդեռ տնտեսական յառաջադիմութեան համար բնական պայմանները խիստ բաւարար են։

Սրանով մենք վերջացնում ենք մեր կարճ տեսութիւնը պ. Քալանթարի հեղինակութեան առիթով։ Իսկ ով հետաքրքրւում է ամբոխի վիճակով և ցանկանում է ուսումնասիրել նրա կեանքը որոշող պայմանները, վստահութեամբ կարող է դիմել պ. Քալանթարի հետաղօտութեանը, որի մէջ այդ կեանքի ամենանչանաւոր կողմերից մէկը նկարագրւած է այնքան հիմնաւոր և յաջող կերպով, որքան այդ հնար է ներկայ հանգամանքներում։